

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

ՄԻՍԱԿՑԱՆ ՎԱՀԵ ՆԵՐՄԵՄԻ

**ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԶՈՂԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՔՐԵԱՂԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ՕՐԵՆՄԱՂՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՂԱՇՆԱԿԵՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՍԱԳԻՐ

Երևան-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Վ.Հ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր
Գ.Մ. Բաղիրյան

իրավաբանական գիտությունների
թեկնածու
Հ.Կ. Կարապետյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի հունիսի 26-ին՝ ժամը 16:00-ին, ՀՀ ԲՈՂ-ի՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի նիստում (0028, ք.Երևան, Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2015 թվականի մայիսի 25-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝**

Ա. Հ. Խաչատրյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ժամանակակից գլոբալացվող աշխարհում պետությունների համագործակցությունը միջազգային կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում նաև մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում չունի այլընտրանք: Պետությունների ներսում պարբերաբար ծագող տնտեսական ճգնաժամերը, սոցիալական կյանքի վատթարացումը, մարդկանց նյութական անբավարար վիճակը և տարաբնույթ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները որպես կանոն պարարտ հող են ստեղծում հանցավոր գործունեության համար, ինչը իր հերթին հանգեցնում է հանցագործության զոհերի թվաքանակի կտրուկ աճի: Հանցագործության թվաքանակի աճը հատկապես վտանգավոր է այն երկրներում, որտեղ արդյունավետ չի հանցագործության զոհերի իրավունքների պաշտպանության առկա համակարգը կամ ընդհանրապես բացակայում են այդ կատեգորիայի անձանց սոցիալ-իրավական պաշտպանության կառուցակարգերը:

Այս խնդրի լուծման անհրաժեշտության գիտակցումը հանգեցրեց հանցագործության զոհերի պաշտպանությանն ուղղված հզոր և ազդեցիկ հասարակական շարժման ձևավորման, օրենսդրության և իրավապահ ու պետական այլ մարմինների կողմից զոհերի նկատմամբ վերաբերմունքի բարեփոխման, քրեական արդարադատության նպատակների և նախապատվությունների վերաիմաստավորման: Արդյունքում ազգային կառավարությունների, ՄԱԿ-ի, Եվրոպական միության և այլ ազդեցիկ միջազգային կառույցների կողմից պաշտպանվող շարժումը հանգեցրեց քաղաքակիրթ պետություններում հանցագործության զոհերի սոցիալ-իրավական պաշտպանության բավականին արդյունավետ համակարգի ստեղծման, բարձրացրեց հանցագործության զոհերի իրավունքների պաշտպանության խնդիրը պետական քաղաքականության մակարդակի:

Վերջին տարիներին ԵՄ-ի կողմից արձանագրված վիճակագրական ցուցանիշները հիմք են տալիս պնդելու, որ հանցավոր ոտնձգության զոհ դարձած անձանց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ է հատուկ և արդյունավետ գործողությունների մշակում և իրականացում: Սա երկակի՝ և՛ անդրսահմանային, և՛ ներպետական ուշադրության արժանի խնդիր է, որը պահանջում է ԵՄ-ից գործուն քայլերի ձեռնարկում:

Քրեական արդարադատության ոլորտում ԵՄ-ն արդեն իսկ ձեռնարկել է զոհերի իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլեր, և անդամ պետություններից շատերն այժմ ստեղծել են տեղում հանցագործությունների զոհ դարձած անձանց պաշտպանության և նրանց օժանդակելու որոշակի կառուցակարգեր: Սակայն ազգային քրեադատավարական

օրենսդրություններում զոհերի պաշտպանվածությունը դեռևս բավարար մակարդակի վրա չի գտնվում, և նրանց իրավունքների պաշտպանվածության մակարդակը ԵՄ տարածքում շարունակում է տարբերվել:

Հարկ է նշել, որ սկզբնապես քրեական արդարադատության ոլորտում ավելի շատ ուշադրություն էր դարձվում կասկածյալի և մեղադրյալի իրավունքների ու շահերի ապահովմանը: Սա պայմանավորված էր այն ենթադրությամբ, որ հանցավոր արարք կատարած անձի իրավունքները և ազատությունները ողջամտության շրջանակներում պետք է սահմանափակվեն: Համաձայն լինելով այս փաստարկին, միաժամանակ չի կարելի անտեսել նաև այդ հանցագործության հետևանքով տուժած անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության խնդիրը, ինչը ոչ պակաս կարևորություն և իրավական երաշխիքներով ապահովելու անհրաժեշտություն ունի:

Այս հանգամանքները, ինչպես նաև ըստրված թեմայի՝ խորությամբ և համակողմանի ուսումնասիրված չլինելը, վկայում են թեմայի արդիականության մասին:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Թեմայի գիտական մշակվածությունը ընդհանուր առմամբ կարելի է բնութագրել որպես հատվածային: Առկա են մի շարք աշխատություններ, ներառյալ ատենախոսական ուսումնասիրություններ՝ նվիրված քրեական դատավարությունում տուժողի կարգավիճակին, իշխանության չարաշահման զոհերին, վիկտիմալոգիայի խնդիրներին: Կրիմինալոգիական ուսումնասիրություններում շոշափվում են հանցագործության զոհերի և իրավապահ մարմինների միջև առկա հարաբերությունների հետ կապված հարցերը: Լուրջ ձեռքբերումներ կան նաև հանցավորության դեմ պայքարում պետական քաղաքականության ձևավորման ընդհանուր մոտեցումների մշակման հարցում: Անշուշտ պետք է ընդգծել նաև ազգային պետությունների, այդ թվում Հայաստանի Հանրապետության իրավագիտության հարցերով զբաղվող անձանց հետաքրքրությունը մարդու իրավունքների և հանցագործության զոհերի իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավական կարգավորումների նկատմամբ, սակայն հանցագործության զոհերի պաշտպանության խնդիրները համակարգված լուսաբանող աշխատանքներ հայրենական իրավագիտության մեջ դեռևս չկան՝ առավել ևս միջազգային փորձի ուսումնասիրմամբ: Մինչ օրս ՀՀ-ում մշակված չէ հանցագործության զոհերի պաշտպանության վերաբերյալ առանձին օրենսդրական ակտ, առկա չէ հանցագործության զոհերի պաշտպանության պետական հիմնադրամի ձևավորման անհրաժեշտության վերաբերյալ պատշաճ հիմնավորում: Դատական պրակտիկայում գրեթե չեն կիրառվում տուժողների վերականգնման վերաբերյալ միջազգային փաստաթղթերը:

Սույն ուսումնասիրության համար գիտական հիմք և եմպիրիկ նյութի կարևորագույն աղբյուր են հանդիսացել հետևյալ հեղինակների աշխատությունները՝ Ա. Շ. Հարությունյան, Ա. Մարգարյան, Գ. Թորոսյան, Ս.Յու. Կաշկին, Ի. Մ. Իբրագիմով, Ի. Ն. Կուզնեցով, Մ. Ա. Չելցով-Բեբուտով, Ի. Յա. Ֆոյնիցկի, Վ. Ե. Կվաշիս, Լ. Վ. Վավիլովա, Տ. Վ. Ապարովա, Օ. Ա. Ջայցև, Վ. Ն. Կուդրյավցև, Դ. Ա. Իսան, Յու. Ա. Տիխամիրով, Ա. Ն. Գլադենկո, , Բ. Ն. Տուպոնին, Օ. Մ. Մեշերյակովա, Ա. Ա. Լևի, Վ. Դ. Լասան, Ջ. Սթայներ, Լ. Վուդս, Կ. Լենարթս, Պ. Վան Նուֆֆել, Բոք և այլք:

Հիշյալ ինստիտուտի վերաբերյալ հրատարակված են գիտական բազմաթիվ հոդվածներ և պաշտպանված են թեկնածուական մի շարքատենախոսություններ (Տ. Գրիգորյան, Մ. Մարարյան, Օ. Մ. Մեշերյակովա, Ի. Լ. Բաչիլո, Մ. Շերբա, Օ. Ա. Ջայցև, Վ. Բոյցովա, Լ. Բոյցովա, Ի. Մ. Իբրագիմով, Հ. Դ. Կուսչև և այլք):

Բարձր գնահատելով հիշյալ գիտնականների հետազոտությունները, որոնք մեծ ներդրում են քրեական իրավունքի գիտության զարգացման ոլորտում՝ հարկ է փաստել, որ մինչ օրս բացակայում է հանցագործության զոհերի իրավունքների պաշտպանության ինստիտուտի շուրջ համալիր մեթոդաբանական և քրեաիրավական ուսումնասիրություն: Քննարկվող աշխատությունը նպատակ ունի ուսումնասիրության ենթարկելու առկա տեսական և գործնական հիմնախնդիրները, որոնք հրատապ լուծում են պահանջում:

Անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ և այլ հանգամանքներով են պայմանավորված թեմայի ուսումնասիրության արդիականությունը, գիտական նորույթը, գիտագործնական նշանակությունը, որի արդյունքները կարող են օգտակար լինել, ի թիվս այլնի, ՀՀ քրեական և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերի մշակման ընթացքում: Այսպիսով, սույնատենախոսական հետազոտության նպատակն է լրացնել, զարգացնել ձևավորված տեսությունը և իրավակիրառ պրակտիկան:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը գտնվում է դատաիրավական լուրջ բարեփոխումների փուլում, բարեփոխման հեղինակների կարևորագույն խնդիրներից է նաև անձի իրավունքների և ազատությունների իրավական կարգավորումները: Նշված բարեփոխումները, ի թիվս այլնի, պետք է ուղղված լինի կյանքի տարբեր բնագավառներում հանցագործության զոհի պաշտպանվածության աստիճանի ավելի բարձրացմանը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական հետազոտության նպատակն է ուսումնասիրել Եվրոպական Միության շրջանակներում հանցագործության զոհերի իրավունքների վերաբերյալ քրեադատավարական օրենսդրության ներդաշնակեցման

առանձնահատկությունները, վեր հանել հանցագործության գոհերի իրավունքների պաշտպանության կարևորագույն ասպեկտները, բացահայտել ՀՀ-ի գործող քրեական օրենսդրության բացերը և ներդաշնակեցման հնարավորությունները, ուսումնասիրել Եվրոպական միության հարուստ փորձը և օգտագործել այն ՀՀ-ում իրականացվող բարեփոխումների ընթացքում:

Այդ ընդհանուր նպատակներով պայմանավորված ատենախոսական հետազոտության շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրները և փորձ է արվել ներկայացնել դրանց լուծման ուղիները.

1) հանցագործության գոհերի իրավունքների պաշտպանության իրավական կառուցակարգերը ԵՄ-ում,

2) հանցագործության գոհերի իրավունքների վերաբերյալ Եվրոպական միության անդամ պետությունների քրեական օրենսդրությունները և ներդաշնակեցման կառուցակարգերը,

3) հանցագործության գոհերի իրավական կարգավիճակը ՀՀ-ում,

4) հանցագործության գոհերի իրավունքների պաշտպանության իրավական կառուցակարգերը ՀՀ-ում,

5) հանցագործության գոհերի իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրության և ԵՄ օրենսդրության մոտարկման հնարավորությունները,

6) հանցագործության գոհերի իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում և դրա զարգացման միտումները,

7) ՀՀ քրեադատավարական օրենսդրական բարեփոխումները, գոհերի իրավունքների պաշտպանության նոր կառուցակարգեր կիրառումը:

Հետազոտության օբյեկտը եվ առարկան: Ատենախոսական հետազոտության օբյեկտ են հանցագործությունից տուժած գոհերի իրավունքների պաշտպանության վերաբերյալ նորմերի կիրառման հետ կապված հասարակական հարաբերությունները, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարի, քաղաքացիներին հանցավոր ոտնձգություններից պաշտպանելու, քրեական դատավարության ընթացքում քաղաքացիական հայցի հարուցման, հանցագործության հետևանքով վնասի փոխհատուցման հետ կապված հարաբերությունների ամբողջությունը: Հետազոտության օբյեկտն են կազմում նաև այն իրավական նորմերը, որոնք կարգավորում են հիշյալ հարաբերությունները:

Հետազոտության առարկան են հանցագործության գոհերի իրավունքների պաշտպանության վերաբերյալ ներպետական և օտարերկրյա օրենսդրությունը, ուսումնասիրվող խնդիրներին վերաբերող տեսական մոտեցումներն ու գիտական մշակումները, դատական պրակտիկան:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմել են համակարգային մոտեցումն ու

դիալեկտիկական մեթոդը: Աշխատանքում օգտագործվել են գիտական հատուկ մեթոդներ. այն է՝ իրավահամեմատական, համակարգակառուցվածքային, սոցիոլոգիական, կրիմինոլոգիական, վիճակագրական, տրամաբանական, վերլուծական և այլ մեթոդներ:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքն են կազմել օտար և հայրենական գիտնականների՝ Եվրոպական իրավունքի, իրավունքի ընդհանուր տեսության, քրեական իրավունքի և դատավարության, միջազգային իրավունքի, կրիմինալոգիայի, պատմության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի բնագավառների աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, ԵՄ հիմնադիր պայմանագրերը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. Եվրոպական կոնվենցիան, Հանցագործության և իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագիրը՝ ընդունված 1985 թվականի նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 40/34 բանաձևով, Չոհերի խարտիան, Եվրոպայի նախարարների Կոմիտեի 1985 թվականի № R(85) 11 «Տուժողի կարգավիճակը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» հանձնարարականը, Եվրոպական միության խորհրդի 2001 թվականի մարտի 15-ի «Քրեական դատավարությունում հանցագործության զոհերի տեղի մասին» հիմնարար որոշումը, «Հանցագործության զոհի իրավունքների, աջակցության և պաշտպանության վերաբերյալ նվազագույն չափորոշիչներ սահմանելու, ինչպես նաև ԵՄ խորհրդի 15.03.2001թ. թիվ 2001/220 շրջանակային որոշումը փոխարինելու մասին» Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ խորհրդի 2012թ. հանձնարարականը, Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը, 1969թ. Նոյեմբերի 22-ի Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան, Ժնևյան կոնվենցիաները, 1966թ. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիրը, ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անարդյակային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ» հռչակագիրը՝ ընդունված 10.12.1984թ., ՄԱԿ-ի 18.12.1992թ. «Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիան, Լիսաբոնի պայմանագիրը (Հռոմի պայմանագիր՝ «Եվրոպական տնտեսական ընկերակցության հիմնադրման պայմանագիր» (TEEC), կնքվել է 25.03.1957թ-ին, ուժի մեջ է մտել 1958թ. հունվարի 1-ից, 1993թ-ին վերանայվել է Մասստրիխտի պայմանագրով և 2009թ. Լիսաբոնի պայմանագրի կնքումից հետո վերանվանվել «Եվրոպական Միության գործունեության պայմանագիր», Քրեական գործերով փոխադարձ օգնության վերաբերյալ Կոնվենցիան, Եվրոպական խորհրդի բազմաթիվ շրջանակային որոշումներ, ԱՂՀ պետությունների, ԳԴՀ-ի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Մեծ Բրիտանիայի, Ավստրիայի, Շվեդիայի, ԱՄՆ-ի

քրեական օրենսգրքերը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ օրենքները, ՀՀ սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի որոշումները, Եվրոպական միության արդարադատության դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային նշանակության վճիռները, ինչպես նաև իրավական այլ ակտեր:

Հետազոտության փորձառական (էմպիրիկ) հիմքը: Հետազոտության փորձառական հիմքը կազմել են ՀՀ սահմանադրական և վճռաբեկ դատարանների որոշումները, Եվրոպական միության արդարադատության դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները:

Հետազոտության գիտական նորություն այն է, որ ատենախոսական թեզը հայրենական գիտության մեջ առաջին փորձն է համալիր կերպով ուսումնասիրել հանցագործության գոհի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները Եվրոպական միության օրենսդրության շրջանակներում, նրանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ ԵՄ-ի կողմից հաստատված չափանիշների ներդաշնակեցման կառուցակարգերը անդամ պետությունների ազգային օրենսդրություններում, ինչպես նաև այդ չափանիշների կիրառման հնարավորությունը հայրենական օրենսդրության զարգացման համար:

Ուսումնասիրելով և վերլուծելով հանցագործության գոհի իրավունքներին և օրինական շահերին վերաբերող Եվրոպական միության, միջազգային հանրային իրավունքի և ներպետական նորմերը և գործնականում դրանց կիրառելիությունը՝ սույն աշխատանքում մշակվել և ներկայացվել են տեսական և գործնական առաջարկներ, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ օրենսդրական բարեփոխումների և ազգային քրեադատավարական օրենսդրությամբ հանցագործության գոհի իրավունքների պաշտպանության արդյունավետության ապահովման գործում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Հետազոտության նպատակների և խնդիրների իրականացման արդյունքում ձևավորված գիտական եզրահանգումների հիման վրա պաշտպանության ներկայացվող դրույթները հետևյալներն են.

1. ԵՄ անդամ երկրների իրավական համակարգերը, մասնավորապես՝ Եվրոպական միության մեջ մտնող պետությունների քրեական արդարադատության վերաբերյալ ազգային օրենսդրությունները զարգացել են առանձին-առանձին բավականին տարբեր պատմական և սոցիալ-քաղաքական իրողությունների պայմաններում, ինչի հետևանքով Միության անդամ պետությունները, ներդաշնակեցնելով քրեական արդարադատության ոլորտում իրականացվող միջոցառումները, պատրաստ չէին սահմանափակել իրենց ինքնիշխանությունը, չնայած դա կլինեք քրեական դատավարության ոլորտի օրենսդրության միասնականացմանն առնչվող ներկա դժվարությունների

կարգավորման շատ պարզ և արդյունավետ եղանակ: Մինչդեռ, ինչպես պահանջում է մարդու իրավունքների պաշտպանության ժամանակակից հայեցակարգը, ԵՄ իրավունքի տարածման կարևորագույն գործիք հանդիսացող օրենսդրության ներդաշնակեցումը *inter alia* պետք է ուղղել ԵՄ-ի և անդամ պետությունների ներպետական օրենսդրությունների միջև հակասությունները վերացնելուն, ինչպես նաև ԵՄ-ի նպատակներն իրագործելու համար ներդաշնակ օրենսդրական միջավայր ստեղծելուն:

2. Շնորհիվ քրեական արդարադատության ոլորտում Եվրոպական միության արդեն իսկ ձեռնարկած գործուն քայլերի՝ անդամ պետություններից շատերն այսօր արդեն իրականացրել են հանցագործությունների գոհ դարձած անձանց պաշտպանության և օժանդակության դրական աշխատանքներ, սակայն ազգային քրեադատավարական օրենսդրության շրջանակներում գոհերի իրավունքների պաշտպանությունը դեռևս հեռու է լիարժեք համարվելուց: Ավելին, ԵՄ անդամ երկրներում գոհերի իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների մակարդակներն այսօր միմյանցից տարբերվում են էականորեն: Հաշվի առնելով այս փաստը՝ անհրաժեշտ է ԵՄ շրջանակներում մշակել և ընդունել գործող ներպետական չափորոշիչների կատարելագործմանն ուղղված առաջարկների մի փաթեթ, որը կապահովի ԵՄ ողջ տարածքում հանցագործության գոհերի՝ անկախ նրանց ազգությունից, քաղաքացիությունից և այլ խտրականություններից զերծ նվազագույն իրավունքների երաշխավորումը: Նման իրավակարգավորումը հնարավորություն կտա, որպեսզի հանցավոր արարքների հետևանքով գոհ դարձած անձինք, որոնք օգտվում են իրենց բնակության վայրի անդամ պետության պաշտպանության միջոցներից, չզրկվեն այդ իրավունքից նաև դրա տարածքից դուրս գտնվելու ընթացքում:

3. Ներկա ինտեգրացիոն գործընթացները հրամայաբար պահանջում են վերացնել առանձին պետություններում ձևավորված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման միջև եղած այն տարաբնույթ տարբերությունները, որոնք նպաստում են մարդու իրավունքների խախտումներին: Ընդ որում, նման խախտումները, ի թիվս այլնի, կարող են առաջանալ իրավաբանական կոլիզիաների ձևով, որոնք դրսևորման առումով հավասարապես վերաբերում են ինչպես կոնկրետ իրավական ակտերին, այնպես էլ դրանց կիրառման պրակտիկային: Ըստ ատենախոսի՝ որոշ բախումներ ծագում են ոչ միայն անորակ, ոչ ժամանակին կամ հակասական ակտերի ընդունման պատճառով, այլ նաև տարբեր որակի իրավակիրառ պրակտիկաների արմատավորման պատճառով: Ոչ հիմնավոր և ոչ ողջամիտ իրավաբանական բախումների պատճառների վերացումը ԵՄ շրջանակներում հնարավոր է իրականացնել միայն հավասարակշռված իրավական ակտերի

ընդունման և միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորման օգնությամբ:

4. Իրավական համակարգերի մոտարկումը, համաշխարհային գործալիզացիայով պայմանավորված, զարգանալու է աստիճանական արագացող ընթացքով: Ատենախոսը գտնում է, որ շատ կարևոր է, որ այս գործընթացի ժամանակ մշակվի իրավական զարգացման ընդհանուր ուղղություն, հարթվեն իրավական տարբերությունները, գործնական քայլեր ձեռնարկվեն ընդհանուր կամ միասնական իրավական կանոնների ստեղծման հարցում:

Չնայած ԵՄ անդամ երկրների քրեադատավարական օրենսդրության ներդաշնակեցումը ենթադրում է այս կամ այն ոլորտում մոտարկման համար անհրաժեշտ օբյեկտիվ պայմանների առկայություն, սակայն պետք է նաև նկատի ունենալ, որ օբյեկտիվ պահանջը երբեմն կարող է դրսևորվել նաև սուբյեկտիվ գործոններով պայմանավորված «ժամանակավոր» բնույթի հանգամանքներով: Այս առումով ազգային օրենսդրությունների մոտարկումը կարող է լինել մշտական և երկարաժամկետ:

5. ԵՄ շրջանակներում հանցագործության զոհի իրավունքների ապահովման տեսանկյունից կարևոր և առանցքային նշանակություն ունի հարգանքի և ճանաչման սկզբունքը, որն իր ամրագրումն է ստացել 2001թ. Խորհրդի «Քրեական արդարադատությունում տուժողի դերի մասին» շրջանակային որոշման, «Հանցագործության զոհի իրավունքների, աջակցության և պաշտպանության վերաբերյալ նվազագույն չափորոշիչներ սահմանելու, ինչպես նաև ԵՄ Խորհրդի 15.03.2001թ. թիվ 2001/220 շրջանակային որոշումը փոխարինելու մասին» Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ Խորհրդի հանձնարարականի մեջ:

Ատենախոսը գտնում է, որ «հարգանքի և ճանաչման» սկզբունքը ոչ միայն ենթադրում է, որ յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ապահովի և երաշխավորի, որպեսզի տուժողը ունենա իրական և պատշաճ դեր իր պետության քրեաիրավական համակարգում, այլև պետություններին պետք է պարտավորեցնի տուժողի իրավունքները ապահովել քրեադատավարական ընթացակարգերի բոլոր փուլերում անխտիր:

6. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 29.11.1985թ. թիվ 40/34 բանաձևով ընդունված «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագրին» միանալուց անցել է արդեն շուրջ երկու տասնամյակ, սակայն ՀՀ ներպետական օրենսդրության մեջ դեռևս չեն արտացոլվել հռչակագրի պահանջները: Չնայած այդ փաստաթուղթը ունի «soft law» բնույթ, սակայն ՀՀ օրենսդրության մեջ դրանում նախատեսված իրավակարգավորումները կունենան դրական ազդեցություն ազգային օրենսդրության բարելավման համար:

Մասնավորապես, ՀՀ օրենսդրության մեջ կարգավորված չեն հանցանքի և իշխանության կողմից չարաշահման գոհերի նկատմամբ արդյունավետ արդարադատության իրականացման իրավունքներն ու կարգը, որոնք նախատեսված են Հռչակագրի՝ «Հավելված» մասով նախատեսված 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ հոդվածներում:

7. ՀՀ քրեական դատավարության՝ ներկայումս շրջանառության մեջ դրված նոր օրենսգրքի նախագծով թեպետ քրեադատավարական մի շարք ինստիտուտների հետ կապված սկզբունքային փոփոխություններ են կատարվել, մասնավորապես ընդարձակվել են տուժողի որոշ իրավունքներ, սակայն պետք է փաստել, որ տուժողի իրավունքների ապահովման և պաշտպանության վերաբերյալ առաջարկվող իրավակարգավորումները միջազգային չափորոշիչներին համապատասխանելու տեսանկյունից դեռևս հեռու են ամբողջական և արդյունավետ լինելուց: Հետևաբար կարելի է արձանագրել, որ այսօր ՀՀ ներպետական գործող օրենսդրությունը պատշաճ խորությամբ չի ապահովում հանցագործության գոհի իրավունքների պաշտպանությունը, իսկ Նախագիծը չի պարունակում նշված կատեգորիայի անձանց իրավունքների պաշտպանության բարելավմանն ուղղված գաղափարական և սկզբունքային նոր լուծումներ:

8. Հանցագործությունից տուժած անձանց իրավունքների և օրինական շահերի անմիջական պաշտպանությանն ուղղված միջազգային կարևոր փաստաթուղթ է նաև Եվրոպայի խորհրդի՝ «Բռնությամբ հանցագործությունների գոհերին վնասի հատուցման մասին» 1983թ. կոնվենցիան, որը Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2001 թ.-ին, սակայն չի վավերացվել: Հիշյալ կոնվենցիան նպատակ ունի անդամ երկրներին պարտավորեցնել մշակելու և ներդնելու պետության կողմից հանցագործությունից տուժած անձանց վնասի հատուցման համակարգ հատկապես այն դեպքերում, երբ հանցագործություն կատարած անձը հայտնի չէ կամ հայտնի է, սակայն չունի վնասները հատուցելու միջոցներ: Կոնվենցիոն այս պահանջը բխում է տուժողի վնասների վերականգնման անհրաժեշտությունից այն դեպքերում, երբ, օրինակ, դատավարական գործընթացների ձգձգման հետևանքով, կամ եթե չի հայտնաբերվում հանցանք կատարած անձը, կամ վերջինս չունի բավարար միջոցներ, հնարավոր չէ վերականգնել տուժողին պատճառված վնասը: Հաշվի առնելով այս ամենը՝ կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունն իր քրեադատավարական նոր օրենսդրությունը մշակելիս որպես նման խնդրի լուծման արդյունավետ տարբերակ կարող է դիտել պետության կողմից տուժողի վնասների վերականգնման համար միջազգային փորձի հաշվառմամբ այնպիսի կառուցակարգեր կամ ընթացակարգեր նախատեսելը, որոնք կերաշխավորեն տուժողի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ ապահովումը:

Որպես նման միջոցի օրինակ կարող է ծառայել որոշ տեսակի հանցագործությունների հետևանքով տուժողներին պատճառված վնասների հատուցման համար պետական հիմնադրամների նախատեսումը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության տեսական նշանակությունը այն է, որ Եվրոպական Միության շրջանակներում հանցագործության զոհերի իրավունքների պաշտպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում կատարված առաջին համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված ուսումնասիրության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել քրեական օրենսդրության կատարելագործման, ուսումնական և գիտական գրականության նախապատրաստման նպատակներով «Եվրոպական իրավունք», «Քրեական իրավունք», «Քրեական դատավարություն», «Կրիմինալոգիա», «Մարդու իրավունքների և ազատությունների քրեաիրավական պաշտպանությունը» ուսումնական դասընթացների շրջանակներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Իրավագիտության» ամբիոնի նիստերում: Ատենախոսության թեմայով հեղինակի կողմից տպագրվել են երեք գիտական հոդվածներ:

Ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք միասին ներառում են յոթ պարագրաֆներ, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության և իրավական աղբյուրների ցանկից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Ներածության

մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ, փորձառնական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ներկայացվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝

«Հանցագործության զոհի իրավունքների պաշտպանության ինստիտուտի միջազգային իրավական հիմքերը եվ դրանց

ամրագրումը ԵՄ անդամ երկրների օրենսդրության մեջ՝ վերնագրի ներքո, կազմված է երեք պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆը՝ «Հանցագործության զոհի իրավական վիճակի ձևավորումը միջազգային հանրային իրավունքում» վերտառությամբ, նվիրված է հանցագործության զոհի հասկացության և նրա իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների ձևավորման և պատմական զարգացման ուսումնասիրությանը միջազգային հանրային իրավունքի շրջանակներում:

Մասնավորապես նշվում է, որ հանցագործության զոհի իրավունքների պաշտպանության միջազգային-իրավական երաշխիքների ամրագրումը միջազգային իրավունքում ձևավորվել և զարգացել մի քանի փուլերով՝ սկսած 1940-ական թվականներից: Նշվել է նաև, որ հանցավորության դեմ պայքարի և հանցագործության զոհի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ ստեղծելու անհրաժեշտությունը պետությունների կողմից գիտակցելու գործում մեծ ներդրում են ունեցել ՄԱԿ-ը և Եվրոպայի խորհուրդը:

Սույն պարագրաֆի շրջանակներում մանրամասն ուսումնասիրվել են են վերը նշված կառույցների կողմից ընդունված միջազգային-իրավական փաստաթղթերը, որի արդյունքում հեղինակը ներկայացրել է հանցագործության զոհի իրավունքների պաշտպանության առնչությամբ միջազգային իրավունքի ոլորտում վերջին տասնամյակներին տեղի ունեցած զարգացումները:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Հանցագործության զոհի իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները ԵՄ անդամ պետություններում» վերտառությամբ, ուսումնասիրվել են ԵՄ-ի անդամ երկրներում հանցավոր ռոնձգության զոհ դարձած անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ առկա իրավակարգավորումները, իրավական պաշտպանության երաշխիքները, դրանց առանձնահատկություններն ու արդյունավետությունը:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Հանցագործության զոհի հասկացությունը և նրա իրավական վիճակը՝ ըստ Եվրոպական միության օրենսդրության» խորագրով, նվիրված է հանցագործության զոհի հասկացության և նրա իրավունքների պաշտպանության՝ ԵՄ-ի կողմից ձևավորած չափանիշների, ինչպես նաև դրանց զարգացման հեռանկարների և ուղղությունների ուսումնասիրությանը:

Հեղինակը նշել է, որ եթե ի սկզբանե միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է եղել հանցանք կատարած անձի իրավունքների պաշտպանությունը, իսկ հանցագործության զոհի իրավունքների պաշտպանության հարցը հիմնականում դիտարկվում էր որպես ներպետական օրենսդրության խնդիր, ապա վերջին տարիներին ազգային և միջազգային իրավունքում տեղի ունեցած առաջադիմական զարգացումը, էապես խթանեցին

հանցագործությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանության նոր երաշխիքների ձևավորման գործընթացը, ինչի արդյունքում տուժողի իրավունքների պաշտպանության հայեցակարգը իր կարևորությամբ այսօր չի զիջում մեղադրյալի իրավունքների պաշտպանության ինստիտուտին:

Այդ կապակցությամբ հեղինակի կողմից քննարկվել է հանցագործության գոհի իրավունքների պաշտպանության ուղղությամբ Եվրոպական միության կողմից քրեադատավարական ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնական ուղղությունների մասին:

Երկրորդ գլուխը՝ «Հանցագործության գոհի իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության ներդաշնակեցման առանձնահատկությունները եվրոպական միության շրջանակներում» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում «Օրենսդրության ներդաշնակեցում հասկացությունը և առանձնահատկությունները Եվրոպական միությունում» վերտառությամբ, ուսումնասիրվել է օրենսդրության ներդաշնակեցումը որպես ԵՄ-ի իրավունքի տարածման կարևոր և հիմնական եղանակ, վեր են հանվել դրա բնորոշման առանձնահատկությունները, տեսակները, հնարավոր միջոցները, ինչպես նաև համեմատադրական վերլուծության լույսի ներքո զուգահեռներ են անցկացվել ԵՄ-ի իրավունքի տարածման այլ եղանակների (մոտարկում, ունիֆիկացիա) հետ:

Ուսումնասիրության արդյունքում հեղինակը նշել է, որ օրենսդրության ներդաշնակեցում՝ որպես ԵՄ-ի իրավունքի իմպլեմենտացման ինքնուրույն եղանակ, առավելապես վերաբերում է ԵՄ-ի և անդամ երկրների օրենսդրությունների համապատասխանեցմանը և ի տարբերություն իրավունքի տարածման այլ եղանակների՝ կրում է համապարտադիր բնույթ:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում «Եվրոպական միության շրջանակներում հանցագործության գոհերի իրավունքների վերաբերյալ օրենսդրության ներդաշնակեցումը և անդամ պետությունների ազգային օրենսդրությունը» վերտառությամբ, ուսումնասիրվում է քրեադատարարատական ոլորտում ԵՄ-ի և անդամ երկրների օրենսդրությունների համապատասխանեցման, ներդաշնակեցման հնարավոր ուղիները, դրանց առանձնահատկությունները:

Նշեցնելով նշել է, որ նշված գործընթացում առկա հիմնական դժվարությունները պայմանավորված են անդամ երկրներ քրեական արդարադատության համակարգերի տարբերություններով, որը ինքնին դժվարեցնում է ԵՄ տարածման գործընթացը: Այդ պատճառով ներկայումս Եվրոպական միության շրջանակներում դատավարական գործողություններն հիմնականում իրականացվում են անդամ երկրների ազգային օրենսդրություններին համապատասխան:

Երրորդ գլուխը՝ «Հանցագործության զոհի իրավունքների պաշտպանության վերաբերյալ ԵՄ-ի չափորոշիչները և հանցագործության զոհի իրավունքների երաշխավորման հայեցակարգը՝ ըստ ՀՀ քրեաարդարադատական նոր քաղաքականության» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում «Հանցագործության զոհի իրավունքների գերակայության իմպերատիվը ՀՀ միջազգային պայմանագրերում» վերնագրով, քննարկվում են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիքներ ամրագրելու վերաբերյալ ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային հանրային իրավունքի շրջանակներում ստանձնած որոշ պարտավորությունների առանձնահատկություններ: Միաժամանակ նշվում է նաև տուժողների իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների ամրագրման գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական և վճռաբեկ դատարանների որոշումների կարևորության մասին:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում «Եվրոպական միության փորձը հանցագործության զոհի իրավունքների պաշտպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության բարեփոխման համար» վերտառությամբ, քննարկվել է հանցագործության զոհի իրավական կարգավիճակը ինչպես ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրության շրջանակներում, նշվել է վերջինիս իրավունքների արդյունավետ պաշտպանության կապակցությամբ համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների, հանցագործության հետևանքով պատճառված վնասի արդյունավետ փոխհատուցման կառուցակարգերի (այդ թվում՝ նաև պետական հիմնադրամների) ներդրման, ինչպես նաև ԵՄ-ի ձևավորած չափանիշներին համապատասխան տուժողի տեղեկացված լինելու իրավունքի ընդլայնման անհրաժեշտության մասին: Ուսումնասիրվել է նաև ներկայումս շրջանառության մեջ դրված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, որով, չնայած մի շարք քրեադատավարական ինստիտուտների վերաբերյալ առաջարկվող սկզբունքային փոփոխություններին, հեղինակը փաստել է, որ տուժողի իրավունքների ապահովման և պաշտպանության վերաբերյալ առաջարկվող իրակարգավորումները դեռևս հեռու են ամբողջական և արդյունավետ լինելուց:

Եզրակացության մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքները և հեղինակի եզրահանգումները, որոնք ամփոփ հանգում են հետևյալին.

- Հանցագործության զոհի իրավական կարգավիճակի ձևավորումը միջազգային ասպարեզում տեղի է ունեցել մի քանի փուլերով: Առաջին փուլը

նշանավորվեց 1948-1966թթ. ընթացքում միջազգային ունիվերսալ փաստաթղթերում՝ մարդու իրավունքների պաշտպանության կոնստեքստում հանցագործության գոհի իրավունքների ամրագրմամբ: Այս փուլում ընդունված միջազգային փաստաթղթերի իրավանորմերի վերլուծությունից կարելի է փաստել, որ դիտարկվող իրավունքը ծագել է որպես բոլոր մնացած հիմնական իրավունքների և ազատությունների երաշխիք:

1960-80-ական թվականներին իրավունքների զարգացման երկրորդ փուլի ընթացքում ամրագրում ստացան առանձին հանցագործություններից գոհ դարձած անձանց իրավունքների ամրագրումը և պաշտպանությունը: Բացի արդարադատության մատչելիության իրավունքից, մշակվեցին տարբեր իրավախախտումներից գոհի իրավունքների իրականացման կառուցակարգեր և ընդգծվեց, որ գոհի իրավունքների պաշտպանության իրականացումը անհնար է առանց պետության արդյունավետ և բազմակողմանի աջակցության:

Երրորդ փուլը առանձնացավ 1985թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի «Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների մասին» հռչակագրի ընդունմամբ, որտեղ առաջին անգամ տրվեց «գոհ» հասկացության բնորոշումը:

• Սույն աշխատության շրջանակներում քննարկված միջազգային փաստաթղթերի, ինչպես նաև տարբեր երկրների օրենսդրությունների ուսումնասիրությունից երևում է, որ թեև հանցագործությունից տուժած անձանց տրվում են տարբեր բնորոշումներ՝ տուժող, մասնավոր մեղադրող, քաղաքացիական հայցվոր, գոհ (միջազգային փաստաթղթերով), այնուամենայնիվ դրանք, ըստ էության, հոմանիշ հասկացություններ են, և հիմնականում վերապահվում են նույնաբովանդակ իրավունքներ և օրինական շահերի պաշտպանության հնարավորություններ:

• Ինչպես ցանկացած ինտեգրացիոն միավորում, Եվրոպական միությունը ևս առնչվում է քրեադատավարական ոլորտը կարգավորող համաեվրոպական միասնական կողմնֆիկսացված օրենքի կամ իրավական այլ ակտի ընդունման խնդրին: Այդ է պատճառը, որ ներկայումս Եվրոպական միության շրջանակներում դատավարական գործողություններն իրականացվում են անդամ երկրների ազգային օրենսդրություններին համապատասխան:

ԵՄ-ի անդամ երկրների ազգային օրենսդրությունների միջև զգալի հակասությունների, տարաձայնությունների պատճառով Եվրոպական օրենսդիրը հաճախ դիմում է համագործակցության այնպիսի ձևաչափի, ինչպիսին է քրեադատավարական օրենսդրության ներդաշնակեցման կապակցությամբ երկարաժամկետ ծրագրերի ընդունումը (այսպես կոչված՝ «ճանապարհային քարտեզներ»): Վերջիններս չեն հանդիսանում ԵՄ իրավունքի աղբյուրներ, սակայն ԵՄ իրավունքի զարգացման համար կարևոր ուղեցույց են:

- ԵՄ իրավունքի տարածման գործընթացը բնութագրվում է տարբեր հասկացություններով, որոնք կարող են վերաբերել ինչպես ԵՄ անդամ պետությունների իրավական համակարգում օրենսդրության ներդաշնակեցման, այնպես էլ ԵՄ-ի հարևանության քաղաքականության շրջանակներում իրականացվող օրենսդրության մերձեցման կամ մոտարկման գործընթացին: Առաջինը կոչված է մեղանիզմներ ստեղծելու ԵՄ-ի ներքին շուկայի բնականոն գործունեությունն ապահովելու համար, իսկ երկրորդն առավելապես նպատակամղված է հարևանության քաղաքականության կամ գործընկեր երկրների օրենսդրությունները հնարավորինս մոտեցնել ԵՄ-ի օրենսդրությանը:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածով նախատեսված «տուժող» հասկացության բնորոշումը իր մեջ ներառում է ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատավարական հատկանիշներ. քրեաիրավական իմաստով տուժողը ի հայտ է գալիս հանցագործությամբ նրան պատճառված նյութական, ֆիզիկական կամ բարոյական վնասի փաստի ուժով, մինչդեռ դատավարական իմաստով նախատեսվում են այն պայմանները և կարգը, որոնց առկայության դեպքում հանցագործության հետևանքով վնաս կրած անձը ճանաչվում է տուժող (քրեական վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշմամբ): Այսինքն՝ ստացվում է, որ քրեորեն պատժելի արարքով անձին պատճառված վնասի պարագայում օրենսդիրը տալիս է տուժողի քրեաիրավական հասկացությունը, որը չի կարող կանխորոշել քրեադատավարական իմաստով տուժող հասկացության ի հայտ գալը՝ մինչև դատավարական համապատասխան ընթացակարգերով անձին որպես այդպիսին ճանաչելը:

- Նախագծով առաջարկվող «տուժող» հասկացությունն անհիմն ընդարձակվելու պարագայում որպես այդպիսիք կարող են ճանաչվել անձինք, որոնց անմիջականորեն վնաս չի պատճառվել (օրինակ՝ ապահովագրական ընկերությունը, որը հատուցել է հանցագործության հետևանքով տուժողին պատճառված վնասները): Այստեղ խնդիրն այն է, որ նախագիծը տուժողին հնարավորություն է տվել հանրային մեղադրողի հետ համատեղ պաշտպանելու մեղադրանքը, մասնավոր մեղադրանքի գործերով որպես մեղադրող հանդես գալու և այլն, և նման պայմաններում հանցագործությունից անմիջականորեն չտուժած երրորդ անձանց՝ ֆիզիկական կամ իրավաբանական, որոնք ըստ էության քրեաիրավական հարաբերության սուբյեկտ չեն, սակայն քաղաքացիական կամ այլ բնույթի վնասներ են կրել հանցավոր արարքի հետևանքով, նույն իրավունքները վերապահելը, ինչ տուժողին, այդքան էլ նպատակահարմար չէ, քանի որ չի բխում քրեադատավարական խնդիրների տրամաբանությունից, մյուս կողմից էլ կարող է տուժողի կարգավիճակ ստացած սուբյեկտներով դատավարության ծանրաբեռնման պատճառ դառնալ:

• Թե՛ ՀՀ քրեական դատավորության օրենսգիրքը, թե՛ նախագիծը «տուժողի» հայտնվելը քրեական դատավարությունում պայմանավորում են գույքային, ֆիզիկական կամ բարոյական վնասի, իսկ նախագծի պարագայում՝ վնաս կրելու բավարար հիմքերի առակայության հետ: Սակայն պետք է փաստել, որ օրենսդրի կողմից հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված են հանցակազմեր, որոնք չեն առաջացնում նշված վնասների տեսակներից որևէ մեկը, այսինքն՝ նման դեպքերում անձը, փաստացի տուժելով, չի կարող ճանաչվել տուժող դատավարական իմաստով, քանի որ բացակայում են վնասի հատկանիշները: Օրինակ՝ մարդուն առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու դեպքերում սահմանափակվում է անձի ազատ տեղաշարժման սահմանադրական իրավունքը, հետևաբար վերջինս փաստացի ձեռք է բերում տուժողի կարգավիճակ՝ նյութաիրավական իմաստով, սակայն քանի այդ արարքներով անձին որևէ վնաս չի պատճառվում, նա չի կարող դատավարական իմաստով ձեռք բերել տուժող կարգավիճակ:

• Անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ-ում հանցագործությունից տուժած անձանց օգնություն ցույց տրվող, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցերով զբաղվող համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների բացակայության հանգամանքին: Միջազգային պրակտիկայի և փորձի հաշվառմամբ այդպիսի կազմակերպությունների, (օրինակ՝ Մեծ Բրիտանիայում՝ «Victim Support», ԵՄ-ում՝ «Weisser Ring» կազմակերպությունների ցանցը) ստեղծումը և հիմնադրումը կարևոր երաշխիք և առաջընթաց քայլ կլինի հանցագործությունից տուժած անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության բնագավառում:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Հանցագործության զոհի իրավունքների պաշտպանության իրավական կարգավորումը Եվրոպական Միությունում, Հանրային կառավարում, Եր., 2013, N 2, էջեր 97-105:

2. Օրենսդրության ներդաշնակեցման առանձնահատկությունները Եվրոպական Միության շրջանակներում, Կանթեղ, Եր., 2014, N 1 (58), էջեր 222-233:

3. Եվրոպական Միության անդամ երկրների քրեադատավարական օրենսդրության ներդաշնակեցման իրավական բնույթը, Հանրային կառավարում, Եր., 2014, N 1-2, էջեր 230-236:

МИСАКЯН ВАГЕ НЕРСЕСОВИЧ

ОСОБЕННОСТИ ГАРМОНИЗАЦИИ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА В СФЕРЕ ПРАВ ЖЕРТВ ПРЕСТУПЛЕНИЙ В РАМКАХ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 “Публичное право”

Защита диссертации состоится 26 июня 2015г., в 16:00 часов на заседании специализированного совета ВАК-а 041 по юриспруденции при Академии государственного управления РА (0028, г. Ереван, ул. Киевяна 8)

РЕЗЮМЕ

Защита прав и свобод личности всегда находилась в центре внимания международного сообщества. ЕС как наднациональное интеграционное объединение тоже имеет важную роль в деле защиты прав и законных интересов лиц, потерпевших от преступных посягательств.

Кандидатская диссертация посвящена всестороннему анализу теоретических, правовых и практических проблем именно данного института. Это проблема, которая достойна и зарубежному, и внутригосударственному вниманию, и которая требует от ЕС принятия действенных шагов.

Показатели, отмеченные ЕС, дают основу утверждать, что для защиты прав этих лиц, необходима разработка и реализация специальных и эффективных действий.

Для стабилизации пространства свободы, безопасности и правосудия комиссия ЕС, основываясь на Стокгольмской программе и плане ее реализации, в качестве стратегического приоритета определил необходимость действий по обеспечению защиты прав потерпевших от преступлений.

В области уголовного правосудия ЕС уже предпринял шаги, направленные на защиту прав жертв, и многие из государств-членов сейчас на местах создали определенные механизмы защиты и содействия лиц, ставших жертвами преступлений. Но в национальных уголовно-процессуальных законодательствах защищенность жертв пока не находится на должном уровне, и уровень защищенности их прав на территории ЕС продолжает различаться.

Стоит отметить, что первоначально в области уголовного правосудия наибольшее внимание уделялось вопросу обеспечения прав и законных интересов подозреваемого и обвиняемого. Это было обусловлено тем предположением, что права и свободы лица, совершившего преступное деяние, в разумных рамках должны быть ограничены. Будучи согласным с данным доводом, в то же время нельзя игнорировать проблему защиты прав и законных интересов лица, потерпевшего вследствие данного преступления, что не менее важно и имеет необходимость в обеспечении законных гарантий.

В первую очередь именно вышеуказанными обстоятельствами обусловлена актуальность темы кандидатской диссертации.

Научной новизной исследования является то, что диссертацией впервые комплексным образом исследуются особенности правового статуса жертвы преступления в рамках законодательства ЕС, механизмы гармонизации критерий, утвержденных ЕС по поводу защиты их прав, в национальных законодательствах государств-членов, а также возможность применения этих критерий для развития отечественного законодательства.

Исследуя и анализируя нормы Европейского союза, международного публичного права и внутригосударственные нормы, относящиеся к правам и законным интересам жертв преступления, и их применимость на практике, в данной работе были представлены теоретические и практические предложения, которые могут иметь важное значение для законодательных реформ и обеспечения эффективности защиты прав жертвы преступления национальным уголовно-процессуальным законодательством.

Автором также в результате сравнительно-правового исследования были выявлены существующие в рамках отечественного законодательства проблемы правового статуса жертвы преступления, и с учетом установленных ЕС, а также другими международными структурами, критерий по поводу эффективной защиты прав жертв были предложены пути решения этих проблем.

На основе результатов проделанного исследования представлен ряд теоретических обобщений и практических предложений по совершенствованию изучаемого института.

Основные положения диссертации нашли свое отражение в опубликованных автором научных статьях.

MISAKYAN VAHE

THE FEATURES OF HARMONIZATION OF CRIMINAL PROCEDURE LAW IN THE SPHERE OF RIGHTS OF VICTIMS OF CRIME WITHIN THE EUROPEAN UNION

Dissertation for the degree of Ph.D. in Law on the specialization of 12.00.02 “Public Law”

The defense of the dissertation will be held on 26 June 2015, at 16:00, at the session of the specialized council 041 on jurisprudence SQC RA at the Public Administration Academy of RA (0028, Yerevan, st. Kievyan 8)

SUMMARY

Protection of rights and freedoms of the individual is always at the centre of international attention. The EU as a supranational integration association also has an important role in protecting the rights and legal interests of persons who have suffered from criminal attacks.

PhD dissertation is devoted to a comprehensive analysis of the theoretical, legal and practical problems of the mentioned institution. This is an issue that is worthy of both foreign and domestic attention, and which requires the EU to take effective steps.

The benchmarks set by the EU provide a basis to argue that for the protection of the rights of these persons it is necessary to develop and implement specific and effective actions.

To stabilize the area of freedom, security and justice, the EU commission based on the Stockholm Programme and its implementation plan, as a strategic priority identified the need for action to protect the rights of victims of crime.

In the field of criminal justice, the EU has already taken steps to protect the rights of victims, and many of the Member States now have created certain mechanisms of protection and assistance of victims of crimes. Nevertheless, in the national criminal procedural law, protection of victims is not yet at an appropriate level, and the level of protection of their rights in the EU continues to vary.

It is worth to mention that initially in the area of criminal justice more attention was paid to the issue of ensuring the rights and legal interests of suspects and accused persons. This was based on the assumption that the rights and freedoms of the person who committed a criminal act, should be reasonably limited. While agreeing with this argument, at the same time we can not ignore the issue of protecting the rights and legal interests of the person who suffered as a result of this crime, which is no less important and needs to provide legal guarantees.

The relevance of the PhD dissertation topic is first of all defined by the above mentioned circumstances.

Scientific novelty of the research is that the dissertation for the first time comprehensively studies peculiarities of the legal status of the victim in the framework of the EU law, mechanisms of harmonization of the criteria adopted by the EU on the protection of their rights in the national legislation of the Member States, as well as the possibility of applying the criteria for the development of domestic legislation.

Exploring and analyzing the norms of the European Union, public international law and domestic norms relating to the rights and legal interests of victims of crime and their applicability in practice, in this work we have presented theoretical and practical suggestions that may be important for the legislative reforms and for providing effectiveness of protection of the rights of victims of crime by national criminal procedural law.

After a comparative legal study the author has also identified the problems of the legal status of the victim in the framework of national legislation, and taking into account criteria set by the EU and other international structures of effective protection of victims' rights ways of solutions to these problems have been suggested.

Based on the results of the research a number of theoretical summarization and practical suggestions for improving of the researched institution has been presented.

The key provisions of the dissertation have been reflected in the scientific articles published by the author.